ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Ա. Դարագյոզյան

Սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» (ՊՈԱԿ)-Ի

11-րդ դասարանի

<<2022-2023>> ուսումնական տարի

Դասղեկ՝ Աստղիկ Անանյան

Հերթական №	Սովորողի ազգանունը, անունը և հայրանունը
1	Աբովյան Արտյոմ Արթուրի
2	Աբովյան Տարոն Վարդանի
3	Ազատյան Արտաշ Ալիկի
4	Ազատյան Էդգար Կարենի
5	Ազատյան Լուսինե Ալբերտի
6	Ազատյան Հայարփի Արտակի
7	Ազատյան Սյուզի Կորյունի
8	Ալիխանյան Սյուզաննա Արթուրի
9	Ազատյան Նելլի Արմենի
10	Անանյան Վահագն Դավթի
11	Ավագյան Արմեն Արսենի
12	Ավագյան Նազելի Կարենի
13	Բարսեղյան Մարիամ Արթուրի
14	Խոդերյան Գոռ Արտյոմի
15	Հովակիմյան Էդգար Էդմոնի
16	Ղուլիջանյան Նարեկ Գարիկի
17	Ջաղինյան Սոնա Ռուբենի
18	Սիմոնյան Վալերի Վրույրի
19	Վարդամյան Ռոբերտ Արամայիսի
20	Փաշիկյան Էրիկ Վարդանի

Ուսումն շաբաթ	Դասղեկի ժամերի թեմատիկա
1.	2022-2023 ուս. տարվա անելիքների քննարկում: Ծանոթացում երկրում՝ <<Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում հանրակրթական

	ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման >> ուղեցույցին:
2.	<< Ով չի սիրում իր երկիրը , ոչինչ սիրել չի կարող>>:
3.	<< Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք
4.	Ձեռքդ տու՛ր , միասին լուծենք բոլոր խնդիրները:
5.	<< **Ընկան , որ ապրենք**… Նրանց փառքը երբեք չի մեռնում, ովքեր հայրենիքի համար են ընկնում>>
6.	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի:
7.	Արտագաղթը այսօրվա ամենամեծ չարիքն է ազգիս համար: Եկեք խոստովանենք, որ օտարության մեջ արևը կարծես չի ջերմացնում:
8.	Ինչ դառնալ կյանքում… <<Ամենամեծ>> պաշտոնը երկրի վրա:
9.	Խիղճ … ամենանաչառ և խիստ դատավորը բոլորիս համար:
10.	Հպարտությո՞ւն , թե ամոթանք: Որոշ մոլությունների մասին:
11.	Մի՛ ձգտիր շահի, այն անկեղծության թշնամին է:
12.	Ինչ հույսեր և նպատակներ իրականացան այս տարում, ինչ սպասումներով և ակնկալիքներով ենք մտնում 2021թ:
13.	Հետաքրքիր էակ է մարդ արարածը. միայն հիվանդության ժամանակ է կարևորվում առողջությունը և պատերազմի ժամանակ է արժևորվում խաղաղությունը:
14	Ինչպես սովորել միայն լավ գործեր անել:
15	Բանակի կազմավորման անցած ուղին:
16	Իմ երկիրը երեկ, այսօր և վաղը:

17	Իմ երկրի պատմության հերոսական էջերը:
18	Ովքեր են պատերազմ հրահրողները:
19	Արցախյան շարժում, Սումգայիթի ջարդ:
20	Նրա մասին , ով ամեն օր իմ կողքին է:
21	Վատ սովորույթների հետևանքները:
22	Ինչպես պայքարել վատ սովորույթների դեմ:
23	Ինչպես լինել քաղաքավարի:
24	Իմ երկրի պատմության հերոսական էջերը:
25	Կարևորել արժեքները մարդու կյանքում:
26	Ուսումնական տարվա ամփոփում, ձեռքբերումներ և բացթողումներ:

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Դասարանի ընդհանուր բնութագիրը. տարվա սկզբում դասրանը բաղկացած է 20 աշակերտից. 10 տղա և 10 աղջիկ:Դասարանը համախմբված և արդեն ձևավորված կոլեկտիվ է:Կան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներ, նրանք ունեն մտավոր լավ կարողություններ, միաժամանակ կարգապահ և պարտաճանաչ են: Աշակերտներից ոմանք ունեն լավ կարողություններ սպորտի, արվեստի և այլ ոլորտներում:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում. լինել հետևողական աշակերտների ուսումնական գործունեությանը, ինքնադաստիարակությանը, արտադասարանական աշխատանքներին: Դաստիարակել աշխատասիրություն, որպես վարքի ամենօրյա նորմա, ընդունել խոսքի և գործի միասնությունը: Բարձրացնել շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունք բնության հետ փոխներգործունեության ընթացքում: Դաստիարակել հայրենասիրություն , քաղաքացիական պարտքի զգացում:

3. Հոգևոր դաստիարակություն. Աշակերտների մեջ սերմանել հետաքրքրություն և համակրանք ազգային-եկեղեցական տոների և տոնակատարությունների հանդեպ, նպաստել քրիստոնեական բարոյական ըմբռնումների

զարգացմանը, զանազանել կեղծավորությունը անկեղծությունից, նվիրվածությունը՝ ցուցամոլությունից, դաստիարակել գաղափարներին մինչև վերջ հետևելու հաստատակամություն:

4.Գեղագիտական դաստիարակություն. Աշակերտին ընկալունակ դարձնել գեղեցիկի հանդեպ, նրա մեջ սերմանել գեղեցիկ վարվելակերպ, գեղեցիկ պահվածք և հաղորդակցության ձևեր:Նպաստել երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, ստեղծմանը և գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը:

5.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն. Ձևավորել հայրենիքը սիրելու և պաշտպանելու պատասխանատվության զգացում, զարգացնել ռազմահայրենասիրական դաստիարակություն: Մեծ հարգանք սերմանել հայոց բանակի և հայ զինվորի հանդեպ, նպաստել հոգեպես հարուստ հայ քաղաքացու ձևավորմանը:

6.Ֆիզիկական դաստիարակություն. Կազմակերպել մարզական մրցումներ, որոնք զարգացնում են երեխաների շարժողական հատկություններըհամատեղ գործելու, փոխօգնության հմտությունները, ձևավորում են ազնվություն, պատասխանատվություն, կարգապահություն, զսպվածություն, հանդուրժողականություն:

7.Աշխատանքային դաստիարակություն. Աշխատանքային դաստիարակությունը պետք է իրականացնել բոլոր դասժամերին, ձևավորել աշխատասիրություն և պատասխանատվության զգացում:Աշակերտի մոտ

դաստիարակել հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ, նպաստել նաև մասնագիտական արհեստ ընտրելու գործում:

8.Բնապահպանական դաստիարակություն. Պետք է կարողանալ կանխել շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, կազմակերպել արշավներ դեպի բնության գիրկը: Կարելի է կազմակերպել ծառատունկ, ծառերի խնամք, թղթի թափոնների հավաքում: Ուսուցանել էկոլոգիական գիտելիքներ:

9.Դպրոց-ընտանիք կապը. Դաստիարակությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել դպրոց-ընտանիք կապը: Համագործակցությունը ծնողների հետ կազմակերպել խմբային և անհատական ձևերով, ինչը օգնում է պարբերաբար սպառիչ տեղեկություններ ստանալ երեխայի մասին, ինչպես նաև օգնում է բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան: